

# Ծանուցում

## Հարգելի բաժանորդ

Վ. Գրուշյան, Վեպեհ թ. 9 ք. 32. 1 ք.  
(բաժանորդի անունը)

3200375  
(քարտի համարը)

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) տեղեկացնում է, որ Ընկերությանն է ներկայացվել դիմում Վ. Գրուշյան, Վեպեհ թ. 9 ք. 32. 1 ք. հասցեում Ձեր պայմանագիրը լուծելու պահանջի վերաբերյալ: Դիմումին կից ներկայացվել է տվյալ հասցեի անշարժ գույքի նկատմամբ դիմումատուի սեփականության իրավունքը հավաստող իրավունքի պետական գրանցման վկայականի պատճենը:

Համաձայն ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի **2022** թվականի հունվարի **5-ի N 5-Ն** որոշմամբ հաստատված ՀՀ էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների (այսուհետ՝ ԵՄԱ) **52-րդ կետի 3-րդ ենթակետի «բ»** պարբերության դրույթների՝ Պայմանագիրը լուծվում է՝ **Բաշխողի կողմից միակողմանի՝**

սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունք ունեցող անձի գրավոր պահանջի դեպքում, եթե Սպառողը չունի ԵՄԱ կանոններով պահանջվող տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իր իրավունքները հավաստող փաստաթուղթ՝ Սպառողին նախապես տեղեկացնելու պայմանով:

Համաձայն ԵՄԱ կանոնների **53-րդ կետի՝** Սպառման համակարգի տեղակայման տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքի վերաբերյալ վեճի առկայության դեպքում, ԵՄԱ կանոնների **52-րդ կետի 3-րդ ենթակետի «բ»** պարբերության համաձայն, Պայմանագրի լուծման հարցը որոշվում է վեճն օրենսդրությամբ սահմանված կարգով լուծելուց հետո:

Հաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք սույն ծանուցումը ստանալուց հետո **10** /տաս/ աշխատանքային օրվա ընթացքում Ընկերությանը ներկայացնել Վ. Գրուշյան, Վեպեհ թ. 9 ք. 32. 1 ք. հասցեի անշարժ գույքի նկատմամբ Ձեր իրավունքների կամ իրավունքների վերաբերյալ կողմերից միջև վեճի առկայությունը հիմնավորող փաստաթղթերը:

Վերը նշված ժամկետում պահանջվող հիմնավոր փաստաթղթերը չներկայացնելու դեպքում դեկավարվելով ԵՄԱ կանոնների **68-րդ կետի 3-րդ ենթակետով** և ԵՄԱ կանոնների **52-րդ կետի 3-րդ ենթակետի** կարգավորումներով, կողմերիս միջև 29.09.2022 թվականին կնքված պայմանագիրը կհամարվի լուծված:

Փաստաթղթերը անհրաժեշտ է ներկայացնել «ՀԵՑ» ՓԲԸ

«Ղարս» մասնաճյուղ, «Գյումրի» Էլ. ցանց

Հարցերի դեպքում զանգահարել 060-711570 հեռախոսահամարով

Գ.Ֆարգադյան

(տնօրենի անունը, ստորագրություն)

13/09/2022թ.